



# FOOTBALL FEDERATION OF ARMENIA

27 Khanjyan Street  
375010 Yerevan, RA

Tel: 374-1/ 54 10 69 Fax: 374-1/ 53 95 17  
E-mail: [uefarm@arminco.com](mailto:uefarm@arminco.com)  
[www.ffa.am](http://www.ffa.am)

ք.Երևան

“\_\_\_\_\_” նոյեմբերի 2004թ.

## ՀՖՖ-Ի ՆԱԽԱԳԱՀԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2005/2006 թթ. ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Հարգելի տիկնայք եւ պարոնայք,

Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան այս հայտարարությամբ սկսում է ֆուտբոլային ակումբների արտոնագրման գործընթացը 2005/2006 թթ. մրցաշրջանի համար, ինչն արտոնագիր ստացած ակումբներին իրավունք կտա մասնակցելու ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին:

Ետևում մնաց ակումբների արտոնագրման առաջին եւ ամենադժվարին տարին:  
Արտոնագրված չորս ակումբներ մասնակցեցին ՈՒԵՖԱ-ի պաշտոնական մրցաշարերին:

Առաջին փորձը ցույց տվեց, որ հայկական ակումբները դեռ շատ անելիքներ ունեն, որպեսզի լիարժեքորեն համապատասխանեն ՈՒԵՖԱ-ի եւ ՀՖՖ-ի արտոնագրման ուղեցույցերի առաջադրած՝ ենթակառուցվածքային, մարզական, կադրային, վարչական, իրավական եւ ֆինանսական չափորոշիչների պահանջներին:

ՀՖՖ-ի Արտոնագրման համակարգի նպատակային խնդիրներն են.

- ձեռնամուխ լինել Հայաստանի բարձրագույն խմբում ընդգրկված բոլոր ակումբներին Արտոնագրման համակարգ ներգրավելուն,
- արդիականացնել ֆուտբոլային մարզակառույցները, դարձնելով դրանք ավելի անվտանգ և հարմարավետ,
- ակումբների մարզչական եւ վարչական աշխատանքներում ներգրավել ինչպես երիտասարդ տաղանդաշատ, այնպես էլ փորձառու կադրերի:

Արտոնագրման իրականացումը չի սահմանափակելու մեր ակումբների գործունեությունը:  
Հակառակը՝ այն կոչված է օժանդակելու ակումբներին, հնարավորինս համապատասխանեցնելու եվրոպական ֆուտբոլի ակումբային չափորոշիչներին: Միաժամանակ այն նպաստելու է ֆուտբոլի՝ որպես մարզաձևի զարգացմանը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, ընդլայնելու է ակումբների ֆինանսատնտեսական գործունեության հնարավորությունը,





# FOOTBALL FEDERATION OF ARMENIA

27 Khanjyan Street  
375010 Yerevan, RA

Tel: 374-1/ 54 10 69 Fax: 374-1/ 53 95 17  
E-mail: [uefarm@arminco.com](mailto:uefarm@arminco.com)  
[www.ffa.am](http://www.ffa.am)

պատանի ֆուտբոլիստներին ապահովելու է ավելի բարեկեցիկ մարզումային պայմաններով, օժանդակելու է հայկական ակումբների հետագա զարգացմանը:

Համոզված եմ, որ Հայաստանում արտոնագրման այս համակարգը հաջողությամբ արմատավորելու պարագայում ֆուտբոլը մեր երկրում կունենա աննախադեպ վերելք՝ ընձեռելով ապագա զարգացման նորանոր հնարավորություններ:

2005/2006 թթ. մրցաշրջանի համար ՀՖՖ-ի Արտոնագրման բաժինը արտոնագրելու է ոչ միայն առաջին չորս տեղերը գրաված թիմերին (մարզական հիմունքներով ՈՒԵՖԱ-ի պաշտոնական մրցումներին մասնակցելու իրավունք ստացած թիմերին), այլ նաև ձեռնամուխ է լինելու մասնակիորեն արտոնագրելու 5-ից 7-րդ տեղերը գրաված, ինչպես նաև բարձրագույն խումբ տեղափոխված թիմերին:

Արտոնագրման ընթացքի մասին մենք կտեղեկացնենք թե հանրությանը, թե բոլոր նրանց, ովքեր առնչվում են այս ծրագրի իրականացման հետ: Կապահովենք նաև արտոնագրման գործընթացի բոլոր մասնակիցների համակողմանի ուսուցումը եւ վերապատրաստումը, որն անհրաժեշտ է ՈՒԵՖԱ-ի կողմից մեզ առաջադրված խնդիրների հաջող լուծման համար:

Ես կոչ եմ անում ներդնել բոլոր ջանքերը՝ հասնելու եվրոպական ֆուտբոլի որակի համատարած մակարդակին՝ մարզական, կադրային, վարչական, ենթակառուցվածքային, իրավական եւ ֆինանսական ոլորտներում՝ ի շահ ֆուտբոլի:

ՀՖՖ Նախագահ՝

/Ռ.Հայրապետյան/